




Ագդարարության Trumpet's Sound փող

53-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2022





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳ-ԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղթանակ մահին Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Եգիպտոսից Քանան (4) Դոն Սթորմըր

Պետրոսը և հրեշտակը Ռեքս Տիրլալ

Քրիստոսի հետ մահանալ և հարություն առնել Քաղված

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (1) ՉՄՅԵ պանորամա

Ծեր նավապետի դարձը Քաղված

Աստված՝ մեր Հայրը Հովիվ՝ Արթուր Գույունյան

Չար ժամանակներ Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մերժված մեծ հյուրը Քաղված

Տերունական աղոթքը Նելլ Բուքման

Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք ԱՍՄ՝

Հաղթանակ մահին

«Իսկ հիմա Ես գնում եմ Նրան, որն Ինձ ուղարկեց, և ձեզանից ոչ մեկը չի հարցնում Ինձ, թե՛ «Ո՞ր ես գնում»: Բայց որովհետև այս բաներն ասացի ձեզ, տրտմությունը լցրեց ձեր սրտերը: Սակայն ճշմարտությունն եմ ասում ձեզ. ձեր օգտին է, որ Ես գնամ, որովհետև եթե չգնամ, Միսիթարիչը չի գա ձեզ, իսկ եթե գնամ, Ես Նրան ձեզ պիտի ուղարկեմ» (Հովհ. 16:5-7):

Կտավները դատարկ գերեզմանում են, քարը գլորված է, բայց որտե՞ղ է Հիսուսը: Տերն Իր աշակերտների հետ հաճախ խոսել էր Իր մահվան ու հարության մասին, սակայն Իր խոսքերը իմաստ ստացան միայն Իր հարությունից հետո: Հարությունը հույս և ուրախություն բերեց աշակերտներին: Նրանք հավաքվեցին մեկտեղ՝ կարծես հաղթանակ տոներու: Եվ իսկապես, Քրիստոսը հաղթեց սատանային:

Բայց ի՞նչ ասենք մեր մասին: Ի՞նչ օգուտ բերեց հարությունը մեզ այսօր: Եթե հարություն չլիներ, ապա մեղքի թողություն և հույս չէինք ունենա, սատանայի դեմ ոչ մի հաղթանակ չէր լինի, Սուրբ Հոգին չէր գա հավատացյալների մեջ բնակվելու, հավիտենականության հեռանկարը անորոշ կլիներ:

Ո՞րն է խոստումը

«Եվ վկայությունն այս է, որ Աստված մեզ հավիտենական կյանք տվեց, ու այս կյանքը Նրա Որդու մեջ է: Ով որ Որդուն ունի, կյանք ունի, իսկ ով Աստծո Որդուն չունի, կյանք չունի: Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որպեսզի իմանաք, որ դուք հավիտենական կյանք ունեք, և որպեսզի հավատաք Աստծո Որդու անվանը» (Ա Հովհ. 5:11-13):

Հարցս հետևյալն է. դու Որդուն՝ Հիսուսին, ունե՞ս սրտիդ մեջ:

«Թող ձեր սրտերը չխռովվեն. Աստծո՛ն հավատացեք, նույնպես Ինձ հավատացեք: Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. եթե այդպես չլիներ, Ես ձեզ կասեի: Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ

և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որպեսզի որտեղ Ես եմ, դուք էլ այնտեղ լինեք: Եվ ուր որ Ես գնում եմ, գիտեք և ճանապարհը գիտեք»» (Հովհ. 14:1-4):

Մրանք են Հիսուսի խոստումները մեզ համար այսօր:

Շնորհակալություն ենք հայտնում Տիրոջը մեր ունեցած հավատքի և Նրա տված խոստումների համար: Հարությունը մխիթարություն բերեց մեր սրտերին, ուրախություն՝ մեր կյանքին և հույս, որն օգնում է մեզ՝ շարունակելու մեր ընթացքը և անհամբերությամբ սպասելու պայծառ ապագային:

Դու նույնպես կարող ես ապաշխարությամբ գալ և ստանալ ձրի փրկությունը՝ իմանալով, որ հավիտենականությունդ Քրիստոսի հետ ես անցկացնելու: Դու նույնպես կարող ես հաղթանակ տանել մահվան նկատմամբ:

Շնորհավոր բոլորիդ Սուրբ Ջատիկը:

Հ. Գ.

Եզիպտոսից Քանան (4)

Աստված Իր Անձը հայտնում է Մովսեսին (մաս 2)

Մեր նախորդ սերտողության մեջ իմացանք, որ Աստված Իր Անձը Մովսեսին հայտնեց, երբ վերջինս 40 տարի Մադիամի երկրում էր: Աստված Մովսեսին հանձնարարեց Եզիպտոս վերադառնալ՝ իսրայելացիներին գերությունից հանելու և Ավետյաց երկիր տանելու համար: Մովսեսը պատճառաբանություններ առաջ քաշեց, որպեսզի չկատարի Աստծո պատվիրածը: Նախ ասաց. «Ես ո՞վ եմ»: Նա մատնանշում էր իր անկարողությունը՝ այդ աշխատանքը կատարելու համար: Այնուհետև Մովսեսը հարցրեց, թե ինչ պետք է պատասխանի նրանց, ովքեր կուգեն իմանալ այն Աստծո անունը, որն իրեն ուղարկել է: Աստված ամբողջությամբ պատասխանեց երկու պատճառաբանություններին: Այս սերտողության մեջ քննարկելու ենք Մովսեսի 3-րդ և 4-րդ արդարացումները:

Երրորդ արդարացումը. «Քայց նրանք ինձ չեն հավատա»

Մովսեսի երրորդ արդարացումն այն էր, որ ոչ ոք իրեն չէր հավատա: Ճշմարիտ է այն, որ բոլորս էլ վախեր ունենք, թե մարդիկ մեզ չեն հավատա: Շատ քիչ են մարդիկ, որոնք պատրաստ են որևէ հարցի համար հաստատ դիրք բռնելու, նույնիսկ երբ զգան, թե իրենց դիրքորոշման պատճառով ծաղրանքի ու նվաստացման են արժանանալու: Նրանք ուզում են բացարձակապես համոզված լինել իրենց հրոշակած պատգամի ճշմարտացիության մեջ:

Սակայն Մովսեսը սովորական իրավիճակում չէր: Աբրահամի Աստվածը նրան հատուկ պատգամ էր տվել: Արդյոք նա հավատացե՞լ էր Աստծո ասածին, և եթե հավատացել էր, արդյոք կա՞ր որևէ պատճառ, որ իսրայելացիները չհավատային Աստծո ասածին: Մենք զարմանում ենք, թե ինչու Մովսեսը տվեց այս հարցը:

Աստված ողորմաբար Մովսեսին նշաններ տվեց՝ ցույց տալու համար, որ իր հետ խոսողը իսկապես Աստված է: Սա անհրաժեշտ էր որպես նոր հայտնության ապացույց: Նոր պատգամին ուղեկցող նշանները միակ կերպն էին, որով կարող էին վստահ լինել, թե այս պատգամը Աստծուց էր:

Մովսեսն ինչպիսի՞ նշաններ պետք է ցույց տար իր ժողովրդին. իր ձեռքի գավազանի օձի վերածվելը և այնուհետև դարձյալ գավազանի վերածվելը: Աստված Մովսեսի միջոցով հաստատում էր Իր պատգամը: Աստված նշաններով ցույց էր տալու Իր գերակայությունը Եգիպտացիների աստվածների նկատմամբ: Բորոտ ձեռքը, որը բժշկվեց, ցույց տվեց Աստծո վերահսկողությունը մարդկային կյանքի վրա: Այս երկու նշանները օգնելու էին իսրայելացիներին ոչ միայն Մովսեսին հավատալու, այլև Աստծուն հավատալու հարցում:

Արդյո՞ք այս նշանները որևէ այլ նշանակություն ունեին: Այո՛: Եգիպտացիները մի քանի աստվածների էին երկրպագում: Այս նշանները սկիզբն էին այն հրաշքների, որոնք Աստված կատարելու էր Եգիպտոսում՝ Իր գերազանցությունը ցույց տալու համար:

Չորրորդ արդարացումը. «Ես ճարտարախոս չեմ»

Արդյո՞ք այս արդարացումով Մովսեսը պատճառ էր փնտրում՝

Աստծուն համոզելու համար, թե ի վիճակի չէ նշանակված առաջադրանքը կատարելու: Ակնհայտ է, որ նա փորձում էր խուսափել Աստծո տված հանձնարարությունից: Այստեղ մի քանի հարց է առաջանում: Արդյո՞ք նա ինքն իրեն համապատասխան չէր տեսնում: Արդյոք հիշում էր ավելի վաղ փորձառած մերժումը, երբ իրար հետ վիճաբանող իսրայելացիները հարցրել էին, թե ո՞վ էր իրենց վրա նրան կառավարիչ կարգողը: Արդյոք փարավոնի՞ց էր վախենում, չնայած որ Աստված նրան ասել էր, թե իր կյանքը փնտրողները արդեն մահացել են:

Հետաքրքրական է Տիրոջ՝ Մովսեսին տված պատասխանը. ո՞վ մարդկանց կդարձնի այնպիսին, ինչպիսին կան: Եվ եթե Աստված է մեզ ստեղծողը, ուրեմն Նա է տալիս մեզ անհրաժեշտ կարողությունը՝ կատարելու այն աշխատանքը, որը ուզում է, որ անենք Իր համար:

Ինչպե՞ս ենք արձագանքում Աստծո պատվիրաններին: Արդյո՞ք փորձում ենք խուսափել կատարելուց այն, ինչ ուզում է, որ անենք: Եթե կա մի բան, որ Նա ուզում է, որ անենք Իր համար, ապա Նա կտա այդ առաջադրանքը կատարելու կարողությունը:

«Ո՛հ, Տե՛ր իմ, աղաչում եմ, ուղարկի՛ր, ում ձեռքով որ ուզում ես ուղարկել»

Մովսեսը փարավոնին չներկայանալու ևս մեկ փորձ կատարեց: Նա Տիրոջը խնդրեց մեկ ուրիշին ուղարկել: Իրականում նա ասաց. «Ո՛վ Տե՛ր, խնդրում եմ ուրիշին ուղարկի՛ր»: Այսպես ասելով՝ նա բացահայտեց Աստծո ասածը չկատարելու իր ցանկությունը: Բայց հարցը, որին մենք պետք է պատասխանենք, հետևյալն է. «Արդյո՞ք Աստված ուզում է այնպիսի բան անենք, որը չենք կարող»: Մենք պետք է հիշենք, որ Նա նաև տալիս է այդ աշխատանքը կատարելու կարողությունը:

Ճիշտ այդ պահին Աստված բարկացավ Մովսեսի վրա: Սա երկու դեպքերից առաջինն է, երբ Աստված բարկացավ Մովսեսի վրա: Երկրորդը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Մովսեսը ժայռին հարվածեց խոսելու փոխարեն: Աստված բարկացավ երկու պատճառով՝ հնազանդելու անպատրաստակամության և դիտավորյալ անհնա-

գանդության համար: Մենք պետք է միշտ ուշադիր լինենք, քանի որ անհնազանդությունը երբեք ընդունելի չէ Աստծո կողմից:

Այնուամենայնիվ, Աստված չարձակեց Մովսեսին այն գործից, որի համար կանչել էր: Նա մտադիր էր, որ Մովսեսը իսրայելացիներին Եգիպտոսից դուրս հաներ: Այդուհանդերձ նա պետք է փարավոնի առջև Աստծուն ներկայացնելու պատիվը կիսեր իր եղբոր՝ Ահարոնի հետ:

Գասեր մեզ համար

Մի քանի կարևոր հարցեր կան, որոնց մասին պետք է խորհրդածենք: Լավ է գիտակցել մեր անկարողություններն ու թույլ կողմերը, բայց չպետք է մեր անհամապատասխանությունը կամ տկարությունը որպես պատրվակ օգտագործենք Տիրոջ պատվիրածը չկատարելու համար: Մենք պետք է գիտակցենք, որ եթե Աստված մեզ առաջադրանք տա, կտա նաև այն կատարելու գորությունը:

Եթե ինքներս չկատարենք առաջադրանքը, Աստված ունի մեկ ուրիշին, ով կկատարի դա, քանի որ Աստծո գործը կատարվում է: Բայց այդպես մեկ ուրիշը կստանա այն օրհնությունը, որը գալիս է Տիրոջը հնազանդելուց:

Արդյոք պատրաստ ենք լիովին ծառայելու Տիրոջը:

Դոն Սթոնմոր



Բ Կորնթացիներին 2:14-16

14. Արդ գոհություն Աստծուն, որ միշտ մեզ հաղթություն է առաջնորդում՝ Քրիստոսում և Իր գիտություն բույրը մեր միջոցով հայտնում է ամեն տեղ:

15. Որովհետև, մենք Աստծո առջև Քրիստոսի անուշ բույրն ենք՝ նրանց մեջ, որ փրկված են, և նրանց մեջ, որ կորչում են.

16. մեկի համար մահվան հոտ ենք՝ դեպի մահ, և մյուսի համար կյանքի հոտ՝ դեպի կյանք: Եվ այս բաների համար ո՞վ է բավարար:

Պետրոսը և հրեշտակը

Գործք Առաքելոց 12

Պետրոսին բանտում պահելու համար մեծ ջանքեր գործադրվեցին, և թվում էր, թե այնտեղից դուրս գալը անհնարին էր: Նա անցյալում բանտից փախչելու փորձառություն էր ունեցել, ուստի այս անգամ Հերովդեսը որոշել էր, որ Պետրոսն այլևս չպետք է բանտից փախչի, ուստի կրկնապատկել էր պահակախումբը՝ չորս կարգ չորսական զինվորներ կարգելով: Բանտախցում Պետրոսը նաև շղթայված էր երկու զինվորներով, իսկ դռան առջև պահապաններ էին հրսկում: Հերովդեսն ուզում էր վստահ լինել, որ այս անգամ ոչ մի հրաշք չէր կարող փրկել Պետրոսին:

Հերովդեսը մեծ ընտանիքի ժառանգական անուն էր: Հերովդես անունը հայտնի էր Նոր Կտակարանի ժամանակաշրջանում: Այս Հերովդեսը Հերովդես Ագրիպպան էր: Իր մեծ հայրը՝ Հերովդես Մեծը, իշխել էր Քրիստոսի ծննդյան ժամանակ և պատասխանատու էր մանուկների սպանողի համար: Հերովդես Ագրիպպայի հորեղբայրը Հերովդես Անտիպասն էր, ով Հիսուսի դատական գործը վարեց: Հերովդես Ագրիպպայի հայրը սպանվեց իր հոր կողմից: Տարբեր Հերովդեսներ սպանեցին իրենց կանանց ու զավակներին: Հերովդեսներից մեկը մահից անմիջապես առաջ դիմեց Օգոստոս կայսրին՝ սեփական որդուն սպանելու թույլտվությունը ստանալու համար: Օգոստոս կայսրը նկատեց, որ ավելի լավ է Հերովդեսի խոզը լինել, քան որդին:

Մինչ Պետրոսը բանտում էր, «նրա համար եկեղեցում անդադար աղոթք էր արվում առ Աստված» (հմբ 5): Հունարեն բնագրում «անդադար» բառը «ektenos»-ն է, որ նշանակում է ձգտել նպատակին հասնելու համար: Դուկասը նույն բառն օգտագործում է Գեթսեմանի պարտեզում Հիսուսի աղերսագին աղոթքը նկարագրելու համար (Դուկ. 22:44): Անդադար կամ ջերմեռանդությամբ աղոթել չի նշանակում, թե Աստված անտարբեր է մեր խնդրանքի նկատմամբ, և մենք պետք է քրտնաջան աշխատենք՝ նրան համոզելու համար: Ջերմեռանդությամբ աղոթել նշանակում է գիտակցել, որ Աստված

մեծ փափագ ունի՝ տեսնելու ինչ-որ գործողության իրականացում, որը մենք նույնպես ուզում ենք տեսնել: «Եվ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց մոտը, և բանտի մեջ լույս ծագեց. և բոթեց Պետրոսի կողը, նրան արթնացրեց՝ ասելով. «Իսկույն վեր կաց»: Եվ շղթաներն ընկան նրա ձեռներից» (հմբ 7):

Արդյոք իսկապես հավատո՞ւմ եք, որ Աստված հրեշտակներ ունի որպես գերբնական գործակալներ, որոնք շրջում են աշխարհում՝ ներգրավվելով մարդկանց կյանքում:

Այս իրադարձությունը արձանագրված է հույն բժիշկ Ղուկասի կողմից: Նա գրել է և՛ Ղուկասի Ավետարանը և՛ Գործք Առաքելոց գիրքը: Այս գրքերը կարդալիս կնկատեք, որ Ղուկասը մանրուքներին ուշադրություն դարձնող պատմաբան է: Իր Ավետարանը սկսում է՝ մատնանշելով, թե այն, ինչ մասին գրում է, ակնատեսներից ստուգել է: Իրեն չէին հետաքրքրում ուրիշների լսածները: Ղուկասի Ավետարանի բոլոր վայրերն ու թվականները, թագավորներն ու կառավարիչները համապատասխանում են աշխարհիկ պատմության գրառումներին: Անցյալ դարի ընթացքում շատ գիտնականներ թերահավատորեն էին վերաբերվում Ղուկասի գրություններին: Թերահավատ գիտնականներից մեկը՝ պրն Ուիլյամ Ռեմսին, լայնածավալ ուսումնասիրություններ կատարեց Փոքր Ասիայում: Իր աշխատության ավարտին, որն ի սկզբանե նախատեսված էր Ղուկասի Ավետարանը հերքելու համար, հետևյալը գրեց. «Ղուկասի պատմությունը անգերազանցելի է իր վստահելիության առումով»: Ուստի մենք ունենք ճշգրիտ պատմաբան, որը հայտնում է մեզ, որ հրեշտակը Պետրոսին բանտից դուրս հանեց: Իսկապես հավատո՞ւմ եք սրան: Մարդիկ, ընդհանուր առմամբ, դեպքի եղելությունը հիմնավորում են իրենց կյանքի փորձով.

- Եթե այն իրենց փորձառությանը համապատասխանում է, համաձայնում են՝ ասելով, թե այդ դեպքը կարող էր տեղի ունենալ:
- Եթե այն իրենց փորձառությանը չի համապատասխանում, ապա չեն համաձայնում և ասում են, թե այդ դեպքը չէր կարող տեղի ունենալ:

Ահա պարզ լուսաբանում. էսկիմոսը Նյու Յորք է այցելում: Երբ տուն է վերադառնում, ընկերներն իրեն հարցեր են տալիս Նյու Յորքի մասին: Նա պատմում է նրանց նավահանգստի երկնասալաց շենքերի և մեծ նավերի մասին: Նրա ընկերները չեն հավատում նրան ու ծաղրում են: Սա նրանց փորձառածից դուրս էր: Ավելի ուշ երկրորդ էսկիմոսը մեկնում է Նյու Յորք ու տեսնում է քաղաքի նույն հրաշալիքները: Տուն վերադառնալուն պես նա հիշում է, թե ինչ էր պատահել առաջին էսկիմոսի հետ, ուստի ասում է. «Նյու Յորքի մարդիկ մեզ մնան ապրում են ձյունատներում և ամեն օր իրենց նավակներով որսորդություն են անում»: Եվ ամբողջ ցեղը հավատում է նրան: Նրանք ավելի նախընտրում են հավատալ ստին, որը համապատասխանում է իրենց փորձառությանը, քան ճշմարտությանը, որը դուրս է իրենց փորձառությունից:

Ղուկասը մեզ ճշմարտությունն է ասում, որը մեր փորձառությունից դուրս է: Աստված Իր ուզած ժամանակին և ձևով ներգործում է մարդկանց կյանքում Իր հզոր հրեշտակների միջոցով: Նկատե՛ք հրեշտակի, Աստծո գործության և Պետրոսի միջև եղած համագործակցությունը: Տեսե՛ք, թե ինչ արեց հրեշտակը և ինչ արեց Պետրոսը: Հրեշտակը Պետրոսին արթնացրեց, նրա շղթաները ընկան, նրան ապահով տարավ պահակների կողքով և բացեց բանտի դուռը: Պետրոսը ոտքի ելավ, հագավ իր հանդերձանքը, հրեշտակի ետևից դուրս եկավ բանտից ու վերջապես քայլեց դեպի Մարիամի ու Հովհաննես Մարկոսի տունը: Պետրոսն արեց այն ամենը, ինչ կարող էր անել: Այն ամենը, ինչ Պետրոսը չէր կարող անել, Աստծո գործությունն արեց:

Երբևէ զգացե՞լ եք, թե շղթաներով կապված եք: Այդ կապող շղթաները երբեմն մեղավորության զգացումը, զայրույթը կամ կախվածությունները կարող են լինել: Նույնիսկ ապագայի հանդեպ մտահոգությունը կարող է կործանել այն ուրախությունն ու խաղաղությունը, որ Աստված ուզում է ձեզ տալ: Միայն Աստված կարող է կտրել այդ շղթաները: Եթե Իր զավակն ես Քրիստոսին՝ որպես Փրկչի վստահելով, ապա Նա արդեն կտրել է այդ շղթաները: Այսօր Տիրոջ զավակներից շատերը չգիտեն, թե ինչպիսի ազատություն ունեն: Ինչպես հրեշտակը Պետրոսին արթնացրեց, նույնպես Քրիստոսը մեզ ասում է. «Արթնացե՛ք, վայելե՛ք այն ազատությունը, որը Ես ձեզ հա-

մար բերեցի»։ Գիտակցե՛ք, որ ազատ եք, և քայլե՛ք այդ ազատության մեջ։ Ապրելու սկզբունքը պատկերված է Պետրոսի փրկության այս հրաշալի պատմության մեջ։

Հավատացյալները Մարիամի տանը հավաքված աղոթում էին, հավանաբար Պետրոսի համար, մինչդեռ նա, ով այժմ ազատ էր արձակված, թակում էր տան դուռը։ Այս քրիստոնյաները զարմացան՝ նրան տեսնելով։ Նրանք չկարողացան հավատալ, որ Աստված պատասխանել էր իրենց աղոթքներին։ Սա վկայում է այն մասին, որ իրականում մեծ հավատք պետք չէ, որ Աստված մեր աղոթքներին պատասխանի։ Երբեք մի՛ մտածեք, թե բավարար հավատք չունեք։ Այս եկեղեցին մեծ հավատք չուներ, նրանք մեծ Աստծո հանդեպ փոքր հավատք ունեին, և հենց սրա մեջ է աղոթքի գորությունը։

Երբ ճանաչենք այս զարմանահրաշ Աստծուն, ով կենդանի է ու գործում է մինչ օրս, մենք կյանքին նոր տեսանկյունից կսկսենք նայել։ Նույնիսկ կյանքի գլուխկոտրուկները, օրինակ՝ երբ մեկը մահանում է, իսկ մյուսը ծնվում է, կսկսեն ուրիշ տեսանկյունից ընկալվել։ Մենք չենք ստանում բոլոր պատասխանները, բայց ավելի գոհունակ ենք դառնում և ընդունում ենք կատարված առեղծվածը, շարունակում ենք դրա հետ ապրել, քանի որ ճանաչում ու վստահում ենք այն Աստծուն, ով այդ առեղծվածի հետևում է կանգնած։

Ռեքս Տիրլավ



«Սիրելիներ՛ր, քանի որ այսպիսի խոստումներ ունենք,
մեր անձերը մաքրենք մարմնի և հոգու ամեն պղծությունից,
սրբությունը կատարյալ դարձնելով Աստծո երկյուղով»։

Բ Կորնթացիներին 7:1

Քրիստոսի հետ մահանալ և հարություն առնել

«Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն, վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում» (Կող. 3:1):

Քրիստոնյաները նոր կյանք ունեցող մարդիկ են: Դարձի պահին Նրանք անկյունադարձային և ամբողջական փոփոխություն վերապրեցին:

Նրանք մահացել են Քրիստոսի հետ: Այսպիսով, նրանք վերջակետ են դրել իրենց հին կյանքին: Նրանց նույնացումը Տեր Հիսուսի մահվան հետ բերեց լիակատար բաժանում մեղքից և աշխարհից: Նախկինում նրանք մեղքի ստրուկն էին և ստիպված էին հնազանդվել դրա մեղավոր ցանկություններին: Բայց հիմա ազատ են մեղքի իշխանությունից: Նախկինում Նրանք պատկանում էին այն աշխարհին, որն Աստծո հետ առնչություն չունի: Սակայն այժմ, նրանք ընտրվել են աշխարհից և կարող են հեռու մնալ դրա ազդեցությունից:

Նրանք Քրիստոսի հետ հարություն են առել: Այսպիսով, նրանց համար բացվել է նոր ոլորտ, որտեղ Քրիստոսը կենտրոնական առանցքն է: Նրանք ապրում են երկրի վրա, բայց նրանց հայացքն ուղղված է դեպի Երկինքը, որտեղ Քրիստոսը նստած է Աստծո աջ կողմում:

Այս փոփոխությունը առօրյա կյանքում հանգեցնում է դրական հետևանքների: Մի կողմից՝ Սուրբ Հոգու գործյամբ պետք է մերժենք մեր հին բնության ցանկությունները և այն, ինչ աշխարհն է առաջարկում, մյուս կողմից՝ մեզ կոչ է ուղղված ամեն օր հավատքով Երկինք նայել և մեր միտքը զբաղեցնել Երկնային արժեքներով: Այսպիսով, աճում է մեր սերը Քրիստոսի հանդեպ, ով նստած է Աստծո աջ կողմում: Միևնույն ժամանակ Նրա փափագներն ավելի ու ավելի են դառնում մեր կյանքի ուղեցույցները:

Քաղված

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (1)

1. Նախաբան

Այժմ դիտարկելու ենք Մեծ նեղության շրջանի վերջին իրադարձությունները: Հայտ. 14-րդ գլուխն ընդհանուր պատկերում է տեղի ունենալիք հիմնական իրադարձությունները, իսկ 15-19-րդ գլուխներում շատ ավելի մանրամասն լուսաբանվում են այդ իրադարձությունները:

Այս սերտողությունում ուսումնասիրելու ենք 14-17-րդ գլուխները՝ յոթ վերջին պատուհասները, և մասնավորապես, կրոնական համաշխարհային տերության ղնչաացումը, որը պատկերված է գազանի վրա նստած կնոջ կերպարով:

2. Վերջին դատաստանների նախերգանքը

14-րդ գլուխն ամփոփ նկարագրում է մի քանի իրադարձություններ, որոնք տեղի են ունենալու Մեծ նեղության շրջանի վերջին տարիներին: Սակայն նախևառաջ առաջին հինգ համարները նկարագրում են դատապարտությունից հետո Իր բոլոր թշնամիներին հաղթած Տիրոջ երկիր վերադառնալը: Թվում է, թե աշխարհի պատմության այդ սարսափելի շրջանի հավատացյալները կրկին վստահեցվում են, որ դատաստանները շուտով կանցնեն, և օրինական Կառավարիչը շուտով կվերցնի Իր երկրային գահը և կվերականգնի իսրայելությունն ու բարգավաճումը ավերված աշխարհում:

2.1. Երկրից փրկված 144,000-ը (14:1-5)

Տարբեր մեկնաբանություններ կան այն մասին, թե ովքեր են այդ մարդիկ և որտեղ են գտնվում: Սերտողությունը հակիրճ պահելու համար մենք կտանք համեմատաբար պարզ մեկնաբանություն:

Տեսիլքում Հովհաննես առաքյալը տեսնում է Գառնուկին, որը կանգնած է Սիոն լեռան վրա Իր 144,000 կնքված ծառաների հետ: Գառնուկը, իհարկե, Տեր Հիսուսն է, և Նա տեսնվում է՝ Երուսաղեմի տա-

ճարի լեռան վրա կանգնած: Նա Իր հետ ունի Իր հավատարիմ ծառաներին, ովքեր աստվածային կերպով պահպանվել են, որպեսզի վկայեն Իր մասին աշխարհի պատմության ամենասարսափելի ժամանակաշրջանում: Մենք կարծում ենք, որ այս ծառաները նույն մարդիկն են, որոնց մասին ներկայացված է 7-րդ գլխում:

Երկրի վրա այս տեսարանը երաժշտություն է հնչեցնում երկրնքում. քնարահարները նվագում են իրենց քնարները ու նոր երգ երգում, որը միայն 144,000-ը կարող էր սովորել: Նրանք բարոյապես մաքուր ու անարատ են և հետևում են Գառնուկին ամենուրեք: Մյուս հավատացյալների նման, նրանք գնվել են Քրիստոսի արյունով. «... Իրենց հանդերձանքը լվացին ու դրանք Գառնուկի արյամբ սպիտակեցրին» (Հայտ. 7:14):

Բայց 144,000-ի մեջ առանձնահատուկ բան կա: Նրանք «մարդկանց միջից փրկվեցին՝ որպես երեխայրիք Աստծուն ու Գառնուկին» (Հայտ. 14:4): Նրանք առաջինն են, ովքեր մաս են կազմելու Քրիստոսի երկրային թագավորությանը: Սպիտակ հանդերձներով մարդիկ, ովքեր դուրս են եկել Մեծ նեղությունից (Հայտ. 7:13-14) նույնպես կկազմեն այդ թագավորության մի մասը, ինչպես ազգերի միջից ընտրված բոլոր «ոչխարները» (Մատթ. 25:31-46):

2.2. Հավիտենական ավետիս քարոզող հրեշտակը (14:6-7)

Այժմ վերադառնում ենք Մեծ նեղության վերջին դատաստանների սարսափելի իրադարձություններին: Թռչող հրեշտակը հավիտենական ավետիսն է հռչակում երկրի բոլոր մարդկանց: Կա միայն մեկ Ավետարան. Պողոս առաքյալը գրել է. «Եթե նույնիսկ մենք, կամ երկրնքից մի հրեշտակ ձեզ մի ուրիշ ավետարան քարոզի, քան այն, ինչ մենք քարոզել ենք ձեզ, նզովյալ լինի» (Գաղ. 1:8): Բայց տարբեր հանգամանքներ պահանջում են, որ պատգամը տարբեր կերպով ներկայացվի: Այդ ժամանակահատվածում Արարչին երկրպագելու փոխարեն հսկայական թվով մարդիկ երկրպագելու են գազանին ու նրա պատկերին: Ուստի հրեշտակը քարոզում է. «Վախեցե՛ք Աստծուց ու փա՛ռք տվե՛ք Նրան, քանի որ եկել է Նրա դատաստանի ժամը: Եվ երկրպագեցե՛ք Նրան, որ ստեղծեց երկինքը, երկիրը և ծովն ու ջրերի աղբյուրները» (Հայտ. 14:7):

2.3. Հրեշտակը հայտարարում է Բաբելոնի անկումը (14:8)

Երկրորդ հրեշտակը հետևում է մի այլ պատգամով. «Ընկա՛վ, ընկա՛վ Բաբելոնը, այդ մեծ քաղաքը, որովհետև բոլոր ազգերին խմել տվեց իր պոռնկության մոլեգին գինուց» (Հայտ. 14:8): Ծննդ. 11-րդ գլխից և Հին Կտակարանի մի քանի այլ գրքերից հասկանում ենք, որ Բաբելոնը մի քաղաք էր, որտեղ բոլոր մարդիկ ձգտում էին իրենց անուն ձեռք բերել ու կրոն հորինել՝ ի հակառակություն Աստծո: Մենք գիտենք, որ Աստված խառնեց նրանց լեզուն և ցրեց նրանց երկրի երեսով (Ծննդ. 11:9): Բայց այստեղ խոսքը այդ հին քաղաքի մասին չէ, այլ՝ համաշխարհային կրոնական համակարգի, որը նման է հին Բաբելոնի առանձնահատկություններին: Այս համաշխարհային համակարգը կկործանվի, և մենք մանրամասնորեն կտեսնենք, թե ինչպես դա կկատարվի, երբ հասնենք 17-րդ գլխին:

2.4. Սարսափելի զգուշացում տվող հրեշտակը (14:9-11)

Երրորդ հրեշտակը հետևում է սարսափելի պատգամով. «Ով երկրրպագում է գազանին ու նրա պատկերին... նա խմելու է Աստծո ցասման գինուց... և կրակով ու ծծումբով տանջվելու է» (Հայտ. 14:9-10): Հայտ. 13:15-ից իմացանք, որ նրանք, ովքեր հրաժարվում են գազանի պատկերին երկրպագելուց, սպանվում են: Նրանք պետք է ընտրություն կատարեն ճշմարիտ Քրիստոսի և գազանի պաշտամունքի միջև:

Նրանք, ովքեր կերկրպագեն Քրիստոսին, տանջանքների և մահվան կենթարկվեն, բայց հետո նրանց ճակատագիրը կլինի հավերժական ուրախություն, ինչպես կտեսնենք ստորև (բաժին 2.5-ում): Այնուամենայնիվ, նրանք, ովքեր կընտրեն գազանի պաշտամունքը, ոչ միայն մահ կկրեն Աստծո ձեռքով, այլ կփորձառեն երկրորդ մահը, որը հավիտենական է (Հայտ. 14:9-11, հմմտ. 20:14):

2.5. Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում (14:12-13)

Մեծ նեղության շրջանի հավատացյալները համբերությամբ կսպասեն Քրիստոսի հետ երկրի վրա լինելուն՝ Նրա հազարամյա թագավորության մեջ, սակայն նրանցից շատերը կմահանան սատանայի և նրա չար ուժերի ձեռքով: Այս հավատացյալները սուրբգրություն-

նից կիմանան, որ եթե այսպես մահանան, ապա օրհնյալների դասին կպատկանեն ու կմտնեն իրենց հավերժական հանգիստը և առատորեն կպարգևատրվեն իրենց հավատարմության համար:

2.6. Երկրի հունձը (14:14-16)

Այս համարների և Մատթ. 13:30, 39-43 և Մատթ. 25:31-46-ի միջև հստակ նմանություններ կան: Այս բոլոր հատվածներից սովորում ենք, որ Իր երկրորդ գալուստին մոտ ժամանակներում, Տեր Հիսուսը, որպես Մարդու Որդի, բոլոր ազգերից կհավաքի նրանց, ովքեր ճշմարիտ հավատացյալներ են, և կպաշտպանի նրանց վերջին դատապարտություններից, որոնք պետք է հեղվեն երկրի վրա:

Հովհաննես առաքյալը նկարագրում է իր տեսածը. «Ահա, մի ճերմակ ամպ, ու այն ամպի վրա մեկն էր նստել, որ նման էր Մարդու Որդուն և գլխին ոսկե պսակ ուներ, իսկ ձեռքին սուր մանգաղ կար» (հմմտ. 1:7, Գան. 7:13 և Մատթ. 24:30): Հասկանալի է, որ Տեր Հիսուսն այդ պահին կօգտագործի Իր հզոր հրեշտակներին՝ Իր դատաստաններն իրագործելու համար: Այս հրեշտակների միջոցով Նա կպտտեցնի Իր մանգաղը երկրի վրա և այդպիսով կհնձի երկիրը (Հայտ. 14:16): Այնուհետև մյուս հրեշտակները կհավաքեն ճշմարիտ հավատացյալներին մի ժամանակավոր ապահով վայրում, որը կոչվում է շտեմարան Մատթ. 3:12 և 13:30-ում: Անհավատները կենթարկվեն վերջին սարսափելի դատաստանին, և բոլորը կզգվեն դժոխք (Մատթ. 3:12, 13:42)՝ սպասելու Մեծ Սպիտակ Գահի դատաստանին, որը տեղի կունենա երկրի վրա Քրիստոսի Հազարամյա թագավորությունից հետո:

QMBC պանորամա
(Շարունակելի)

«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ՛ր, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր իմաստալից պաշտամունքն է»:

Հոռնեացիներին 12:1

Ծեր նավապետի դարձը

Ծեր նավապետը իր կյանքի վերջին ճամփորդությունն էր անում: Նա տարիքը առած նավաստի էր, որ պետք է հանգստանար: Մակայն անողորք հիվանդությունը նրան գամել էր ծերերին և անկարող նավաստիներին հատկացված ծերանոցի անկողնուն: Նա, ծովի կյանքին վարժված, շատերի պես նախապաշարումներ ունեցող մարդ էր և կատարյալ անհավատ:

Մի եկեղեցու բարեպաշտ հովիվ, որ սիրում էր հոգիներին ու փրկություն էր նրանց, մի օր այցելեց այս մարդուն և նրան պատմեց Աստծո սիրո, Քրիստոսով եղած ձրի փրկության, հավիտենական կյանքի և երջանիկ հույսի մասին, որ անխտիր բոլոր մարդկության համար է:

- Ես հավատք չունեմ և Մուրբ Գրքին չեմ հավատում,- ասաց ծեր նավապետը:

- Կարո՞ղ ես ասել, թե ինչի՞ն չես հավատում,- հարցրեց հովիվը՝ նրա կասկածները լուսաբանելու նպատակով:

- Չգիտեմ, - խոստովանեց մարդը:

- Ուրեմն, ահավասիկ քեզ եմ տալիս Հովհաննեսի Ավետարանը և մի կարմիր մատիտ: Վերցրո՛ւ և կարդա՛ այն: Երբ կհանդիպես այնպիսի բաների, որոնք չես հասկանա կամ չես հավատա, դրանք կարմիրով ընդգծի՛ր, և երբ վաղը դարձյալ գամ՝ քեզ այցելելու, դրանց մասին կխոսենք:

Հաջորդ օրը, երբ Աստծո ծառան ներս մտավ, նկատեց, որ մարդն ավելի էր տկարացել: Նա ժպիտով մոտեցավ նրան և մի քանի սիրալիր խոսքեր փոխանակելուց հետո հարցրեց.

- Կարդացած հատվածի մեջ արդյոք հանդիպեցի՞ք որևէ բանի, որ չհասկացաք կամ չկարողացաք հավատալ:

Նավապետը բռնազբոսիկ ժպիտով ժխտական նշան տվեց՝ գլուխը շարժելով: Այսպես մի քանի օր շարունակ:

Մի առավոտ, երբ հովիվը ներս մտավ՝ նրան այցելելու ու նրա հետ զրուցելու հոգու փրկության մասին, տեսավ, որ անկողինը դատարկ էր: Նա, կյանքի օվկիանոսում իր վերջին ճամփորդությունը կատարելով, իր անցյալը թողած, հավիտենականություն էր անցել: Հովիվը մտահոգվեց ու հուսախաբ եղավ այն բանի համար, որ ևս մեկ ամիս չունեցավ՝ խոսելու մարդու հետ նրա ապաշխարության մասին:

Հանկարծ աչքն ընկավ անկողնու մոտ գտնվող փոքրիկ սեղանի վրա դրված Հովհաննեսի Ավետարանին: Նա վերցրեց և հետաքրքրությամբ սկսեց թերթել այն: Առաջին գլուխը բացեց և ոչ մի նշանի չհանդիպեց: Թերթեց երկրորդ գլուխը և դարձյալ կարմիր նշանի չհանդիպեց: Երբ երրորդ գլուխը բացեց և համարներին նայեց, նկատեց, որ 16-րդ համարն ընդգծված է կարմիր շրջանակով. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա», իսկ լուսանցքում՝ անճոռնի ձեռագրով գրված, սակայն խիստ նշանակալից հետևյալ խոսքերը կարդաց. «Խարիսխս ապահով նավահանգիստ նետեցի»: Սա տեսնելուն պես հովիվի դեմքը ուրախությունից սկսեց փայլել, որովհետև անմահ ու թանկագին հոգուն կարողացել էր Փրկչի մոտ առաջնորդել:

Ծերունի նավապետը, իր կյանքի վերջին ժամերին, Աստծո Խոսքի լույսով կարողացել էր հավիտենական կյանքի մեծագույն ապահովությունը ձեռք բերել և երջանիկ ու փառավոր հույսով աչքերը փակել՝ Երկնքի մեջ բացելու հաստատ հավատքով ու համոզումով:

Միրելի՛ անապաշխար հոգի, աշխարհում, Քրիստոսից բացի, ուրիշ ոչ ոք չի կարող այս հույսը ներշնչել: Ուրեմն դիմի՛ր Նրան. Նա է միայն ապահով ու վատահելի խարիսխը քո ներկա և ապագա կյանքի համար: Վստահի՛ր ու հանձնվի՛ր Նրան: Նա քեզ կառաջնորդի դեպի ապահով ու անվտանգ նավահանգիստ:

Քաղված՝ «Չմայլելի դրվագներ» գրքից

Աստված՝ մեր Հայրը

Սաղմոս 103:13-22

Աշակերտները իրենց Տիրոջից՝ Հիսուսից, խնդրեցին, որ իրենց աղոթել սովորեցնի: Հիսուսն ասաց, որ երբ աղոթք անեն, ասեն. «Ով Հայր որ Երկինքն ես...»: Ամեն անձ չի կարող Աստծուն «Հայր» կանչել, եթե վերստին ծնունդ չունի: Նա միայն նրանց Հայրն է, ովքեր Նրան ընդունել են: Աստված բոլորի Աստվածն է, բայց Նա բոլորի Հայրը չէ:

Աստված տարբեր անուններով Ինքը իրեն հայտնել է մեզ: Աստծո անունները իմաստալից են և ամեն անվան հետևում խորհուրդ կա: Նրանք Աստծո անձը ներկայացնում են մեզ: Այս անուններից որոշները Աստծո մեծությունն ու փառքն են պատմում մեզ, իսկ մյուսները կարող են անհանգստացնել մեզ: Օրինակ՝ երբ ասում ենք «արդար Աստված», հիշում ենք մեր հանցանքները, անօրենությունները և վերջին դատաստանը: Երբ ասում ենք «սուրբ Աստված», հիշում ենք մեր մեղքերը: Երբ «գորաց Տեր» և «ամենակարող Աստված» ենք ասում, վախը պատում է մեզ: Երբ ասում ենք «Աստված մաշող կրակ է», մի պահ կծկվում ենք, բայց երբ ասում ենք «Այս մեծ և ահարկու Աստվածը Տեր Հիսուսով մեր Երկնավոր Հայրն է», հիանալի վիճակ է ստեղծվում մեզ համար. մեր ձգված նյարդերը հանգրստանում են, և վախերը փարատվում են: Հայր անունը անուշ է հնչում մարդ արարածին. այն վանում է մարդու կասկածները և կազդուրում նրա մարած հոգին, ինչպես բազմության մեջ կորած մանուկը, իր հոր ձայնը լսելով, ուրախությամբ, միաժամանակ հեծկլտալով նետվում է նրա գիրկը: «Հայրիկ» անունը շատ հիշողություններ է արթնացնում մեր մանկության օրերից: Հիշում ենք, թե ինչպես հայրիկը հոգում էր ու գուրգուրում մեզ: Սաղմոս 103:13-ն ասում է. «Ինչպես որ հայրն է գթում իր որդիներին, այնպես էլ Տերն է գթում Իրենից վախեցողներին»: «Հայր» անվան հիմքը սերն է: Հայր Աստված մեր հանդեպ Իր ունեցած սիրո համար Իր Միածին Որդուն խաչին հանձնեց մեր մեղքերի համար: Աստծո սերը անկեղծ է, հա-

րազատ, անշահախնդիր: Երբ սերը վերցնենք Աստծո անունից, Նա կդադարի Հայր լինելուց և կլինի միայն ամենակարող Աստված, ամենազեղ Աստված, ամենատես Աստված, սուրբ Աստված, արդար Աստված, բայց ոչ Հայր Աստված: Մենք այսպիսի Աստծո դիմաց կանգնելու համարձակություն չէինք ունենա, Նրա հետ շփվել չէինք կարողանա, եթե Նա Հայր Աստված չլիներ մեզ համար: Մենք կարիք ունենք այնպիսի Աստծո, ով մեր տկարությունները կհասկանա, կհիշի, որ հող ենք, կ'ողորմի ու կգթա մեզ և մեր Փրկչին, որը մեզ ներկայացնում է մեր փնտրած Աստծուն: Երբ աղոթեք, ասե՛ք. «Ով Հայր մեր, որ Երկնքում ես»:

Կյանքի դժվարությունները և նեղությունները բոլորի համար են, սակայն երբ հավատացյալը մութ օրերում գտնվի, երբեք չպետք է կասկածի Աստծո սիրո վրա: Եթե այդ վստահությունը չունենա, Աստծո վարմունքը իր հանդեպ շատ անհասկանալի կլինի, ու սխալ կարծիքներ կունենա Աստծո սիրո մասին: Գեթսեմանի պարտեզում Աստված դառն բաժակ տվեց Իր Միածին Որդուն: Հիսուսն ընդունեց խաչի անգութ, ամենադաժան մահը և դառը բաժակը, որովհետև վստահ էր, որ այն մատուցողը Իր Հայրն էր. «Հայր, եթե կամենում ես, այս բաժակը հեռացրո՛ւ Ինձնից: Բայց ոչ թե Իմ կամքը, այլ՝ Քո կամքը թող լինի»: Նա ժողովրդի առաջնորդների կողմից հալածվեց, իրենների կողմից լքվեց, ֆիզիկական և մտային անտանելի տառապանքների մեջ գտնվեց, սակայն Իր մխիթարությունը, համբերությունը, հույսը Իր Երկնավոր Հոր մեջ գտավ:

Մերը անհրաժեշտ և հիմնական հայրական հատկություն է, սակայն հայրը ուրիշ հատկություններ ևս պետք է ունենա: Բ Օրինաց 32:10-13-ում կարդում ենք, թե ինչպես Աստված Իր ժողովրդին՝ իսրայելացիներին, հակառակ նրանց անհնազանդության, խրատեց, պաշտպանեց, աչքի բիբի պես պահեց, արտերի պտուղով կերակրեց, վեմից մեղր և յուղ հայթայթեց, ոչխարների և կովերի կաթ խմեցրեց, ցորենի ընտիր ալյուրով կերակրեց և խաղողի գինով ուրախացրեց նրանց հոգիները: Հոր համար հաճելի պարտականություն է իր զավակների կարիքները հոգալը: Նրանց ուրախությունը իր ուրախությունն է, նրանց ցավը իր ցավն է: Այդուհանդերձ, մարմնավոր հայրը, որքան էլ լավ տրամադրված լինի իր զավակների հանդեպ,

տկարություններ ունի և հակառակ իր կամքին և փափագին՝ հաճախ ձախողվում է իր պարտականությունների մեջ: Բայց հավատացյալի Երկնավոր Հոր սերն ու հոգատարությունը կատարյալ են: Նա խոստացել է չզլանալ Իր զավակներին որևէ բարիք շնորհելուց, որոնք Իրեն հարգում են, Իրենից վախենում են ու Իր ճանապարհներով են քայլում: Մակայն, ի մտոք ունենանք, որ Աստծո օրհնությունները ստանալու համար մեր առջև պայմաններ կան: ԲՕ Օր. 28-րդ գլխում Աստված Իր ժողովրդին այսպես ասաց. «Եվ այս բոլոր օրհնությունները քո վրա կգան, քեզ կհասնեն, եթե քո Տեր Աստծո ձայնին ունկընդդես»:

Հայրը ունի նաև մի տարբերվող հատկություն. նա կրթում է իր զավակներին, ապահովում է նրանց ուսումը և զարգացումը: Մանուկը պետք է աճի, մեծանա ու գորանա թե՛ մարմնապես, թե՛ մտային կերպով, թե՛ հոգեպես, որպեսզի նկարագիր կերտվի, այսինքն՝ սովորի աշխատել, համբերել, հարատևել, դժվարությունների դիմանալ, երբեք չհուսահատվել և բարոյական արժեքներ գնահատել: Որքան կարևոր է ընտանեկան բարեկրթությունը: Յավալի է, որ շատ ծնողներ ակնկալում են, որ մանուկի հաճախած դպրոցը ապահովի այդ կրթությունը: Հայրը պետք է տոկուն նկարագիր կերտի զավակի մեջ, որպեսզի նա կարողանա դեմ դնել կյանքի պայքարներին: Ինչպես մարմինը մարզվում է վազելով, մագլցելով, ընկնել-ելնելով, այնպես էլ հոգին է մարզվում դժվարություններով, նեղություններով, ձախողություններով, վտանգներով, փոթորիկներով, արկածներով, ընտանեկան տագնապներով, նյութական նեղություններով և նման այլ բաներով: Սրանք հաճելի բաներ չեն, բայց այսպիսի իրավիճակներում մեր հոգևոր կյանքը գորանում է: Հայրը պետք է խրատի ու պատրաստի զավակին՝ սովորեցնելով, որ կյանքում հաջողակ լինելու միակ կերպը դժվարությունները հոժարակամ ընդունելն է, նեղություններին դեմ գնալն է՝ տոկալով և հարատևելով: Նույնպես մեր Երկնավոր Հայրը ուզում է, որ Իր զավակները մարզվեն հոգևոր պայքարի մեջ, որպեսզի արժանանան երկնային ուրախությանը:

Աստված ուզում է, որ եկեղեցիները դադարեն հիվանդանոցներ լինելուց և դառնան գորանոցներ: Նա ուզում է, որ հավատացյալները մոռանան իրենց ցավերը և ուրիշների ցավերով հետաքրքրվեն: Աստ-

ված Իր պարտեզում շատ կոկոններ ունի. նրանք պետք է ծաղկեն: Եթե հավատացյալը իր հոգևոր կյանքում չծաղկի ու պտուղ չբերի, երբեք շարունակական խաղաղություն և ուրախություն չի ունենա երկրի վրա: Նա շարունակ կգանգատի, կտագնապի և Աստծո վերաբերմունքը սխալ կհասկանա: Այսպիսի հոգևորները չեն կարող լավ տպավորություն թողնել աշխարհայինների վրա, և դժբախտաբար, Աստծո գործը կտուժի: Հավատացյալը վկայում է իր կյանքով: Կյանքի հնոցով անցած հավատացյալները ազդեցիկ վկայություններ ունեն: Շարունակական հանգստությունը, առողջությունը, հաջողությունը տոկուն հավատացյալներ չի արտադրում: Մեր Երկնավոր Հայրը թույլ է տալիս, որ մենք դժվարությունների հանդիպենք: Ոսկերիչը իր ոսկին կրակի մեջ է դնում ոչ թե այն փչացնելու համար, այլ մաքրելու և գտելու: Երբեմն կարծում ենք, թե մեր Հոր վարմունքը անարդար և անգութ է: Սակայն այն մեզ ցավեցնելու համար չէ, այլ դարմանելու: Եբր. 12:5-6-ն ասում է. ««Որդյա՛կս, Տիրոջ խրատը մի՛ անարգիր և երբ Նրանից հանդիմանվես, մի՛ վիատվիր, որովհետև ում Տերը սիրում է, խրատում և ծեծում է ամեն մի զավակի, ում ընդունում է»»: Եվ այս ոչ թե նրա համար է, որ տրտմեք, հապա իմանաք այն մեծ սիրո մասին, որ Աստված ունի ձեզ վրա:

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

Հովիվ՝ Արթուր Գույունյան

«Տեսե՛ք, թե Հայրը մեզ ինչպիսի սեր շնորհեց, որ մենք Աստծո որդիներ կոչվենք. սրա համար է, որ աշխարհը մեզ չի ճանաչում, որովհետև Իրեն էլ չճանաչեց:

Սիրելիներ՛, մենք հիմա Աստծո որդիներն ենք, ու դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու. բայց գիտենք, որ երբ Նա հայտնվի, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է»:

Ա Հովհաննես 3:1-2

Չար ժամանակներ

Բ Տիմոթեոս 3

Անկասկած, խոսք չկա այն մասին, որ գիտությունն ու տեխնոլոգիան շատ արագ են զարգանում: Անցյալում Ատլանտյան օվկիանոսից այն կողմ որևէ լուր ուղարկելու համար շաբաթներ կամ ամիսներ էր պահանջվում: Տարիներ առաջ մեզ զարմացնում էր ֆաքսի սարքը, որը մի քանի րոպեում կատարում էր այդ աշխատանքը: Իսկ հիմա ինտերնետի և էլեկտրոնային նամակների միջոցով լուրերն ակնթարթորեն են փոխանցվում:

Մարդը միշտ գիտելիք և իր կյանքը բարելավելու ուղիներ է փնտրել: Դժբախտաբար, այդ փափագը մոլուցք է դարձել: Մարդն ուզում է ավելի հայտնաբերել, հորիներ, ավելի լավ գործիքներ ու սարքեր ունենալ, ավելի լավ ու արագընթաց փոխադրամիջոցներ, ավելի մեծ ու բարձր շենքեր ունենալ:

Թվում է, թե կատարելության այս փնտրտուքը պետք է որ այս աշխարհը դարձնեն ավելի լավ վայր, իսկ մարդկանց՝ ավելի լավը: Բայց ճիշտ հակառակը՝ մեր աշխարհը գրեթե կործանվում է: Փոխանակ ավելի շատ ջրի և կերակրի պաշարների լինելին՝ մարդիկ ամենուրեք սովամահ են լինում և ջրագրկվում: Մարդկանց նկարագիրն ավելի է խեղաթյուրվում:

Ոչ ոք չպետք է զարմանա այս փաստից, որը 2000 տարի առաջ կանխատեսել էր Պողոս առաքյալը.

«Այս էլ իմացիր, որ վերջին օրերում չար ժամանակներ պիտի գան»
(Բ Տիմ. 3:1):

Թեև մենք չենք կարող ճշգրտորեն կանխատեսել, թե երբ է լինելու այդ վերջը, սակայն տեսնում ենք այն նշանները, որոնց մասին խոսում է Աստվածաշունչը: Այն ասում է, որ մարդիկ մերժելու են Աստծուն՝ հետևելով իրենց եսասիրական ցանկություններին. մեղքն անտանելի է դարձնելու այս երկրային կյանքը: Վնասվելու են նույնիսկ կենդանական և բուսական աշխարհները:

Այդ նշանները տեսնում ենք, թերթերից և հեռուստատեսությունից տեղեկանում ենք հանցագործությունների, ամուսնալուծված ընտանիքների, օդի և ջրի աղտոտվածության և մահացու հիվանդությունների մասին: Աստծո Խոսքը մարգարեացել է նույնիսկ այն մասին, թե ինչպես են քրիստոնյաներին ծաղրելու:

«Բայց նախ պետք է իմանաք, որ վերջին օրերին գալու են ծաղրողներ, որոնք ընթանալու են իրենց ցանկությունների համեմատ, և ասելու են. «Ո՞ր է Նրա գալստյան խոստումը, քանի որ մեր հայրերը ննջեցին, բայց ամեն ինչ շարունակվում է այնպես, ինչպես արարչագործության սկզբից էր»» (Բ Պետ. 3:34):

Բ Տիմ. 3:5-ում կարդում ենք. «Աստվածապաշտության կերպարանքն ունենալով, բայց դրանում եղող գործությունն ուրանալով: Այդպիսիներից ե՛տ քաշվիր»: Այս աշխարհը լի է կրոններով, բայց դրանք առանց Աստծո գործության անօգուտ են և նույնիսկ վտանգավոր: Պողոսը մեզ պատվիրում է հեռու մնալ անաստված կրոնից:

Դու ուզո՞ւմ ես բարեպաշտ կյանքով ապրել. Աստծո օգնությամբ հետևի՛ր Պողոս առաքյալի խորհրդին:

«Այո՛, ովքեր ուզում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսի մեջ, հալածանք պիտի կրեն: Բայց չար և խաբեբա մարդիկ ավելի ու ավելի պիտի խորանան չարության մեջ, մոլորեցնելով և մոլորվելով: Սակայն դու հարատևի՛ր այն բաների մեջ, որ սովորեցիր և հավատացիր, իմանալով, թե ումից սովորեցիր, նաև մանկուց գիտես Սուրբ գրքերը, որոնք կարո՞ղ են իմաստուն դարձնել քեզ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. 3:12-15):

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան



Մերժված մեծ հյուրը

Վիեննացի հայտնի բժիշկ Ադոլֆ Լորենցը անցյալ դարի կեսին ապրող աշխարհահռչակ վիրաբույժ էր: Ամեն կողմից մարդիկ իրեն դիմում էին և իր միջամտությունը խնդրում՝ թանկագին կյանքեր ազատելու համար: Անկարող լինելով գոհացում տալ բոլորին՝ ուրիշ մասնագետներ պատրաստեց: Իր օգնականներին սովորեցրեց վիրաբուժական արվեստի բոլոր գաղտնիքները, և այս կերպով գործը մի քիչ թեթևացավ: Եվ նա կարողացավ Միացյալ Նահանգներ մեկնել, ուր հրավիրված էր՝ դասախոսելու կույրադիքի և աղեթափության վիրահատությունների մասին:

Մի օր՝ երեկոյան, ծանր աշխատանքից հետո դուրս եկավ՝ մաքուր օդ շնչելու և քայլելու: Հանկարծ սև ամպեր կուտակվեցին երկընթուս, և տեղատարափ անձրև սկսեց: Բժիշկը բախեց գեղեցիկ տեսքով մի տան դուռ, որպեսզի անձրևից պաշտպանվի: Սակայն զայրացած մի կին բացեց դուռը և շտապելով ասաց. «Մենք այսօր մեծ նեղության մեջ ենք: Գնացեք և որևէ հարևանի հարկի տակ ապաստան փնտրեք», - և անմիջապես գոցեց դուռը: Գուկտոր Լորենցը փողոց դուրս եկավ այդ անբարենպաստ եղանակին: Անձրևն ու փոթորիկը թափանցում էին մինչև ոսկորները: Վերջապես մի մարդ, նրան հանդիպելով, կառքի մեջ նստեցրեց և պանդոկ տարավ:

Այդ նույն գիշերը վերոհիշյալ կինը օրաթերթ էր կարդում: Առաջին էջի վրա նկատեց նշանավոր վիրաբույժի նկարը: Անմիջապես նրան ճանաչեց և բացականչեց.

- Աստված իմ, ի՞նչ արեցի: Մերժեցի տանս դուռը բացել այն միակ անձի առաջ, ով կարող էր մեր աղջկա կյանքը փրկել: Թերևս եթե հիմա պատմենք նրան, նա գթա մեզ և կատարի մեր խնդրանքը:

Ուստի վազեց դեպի պանդոկ: Այնտեղ իրեն ասացին, որ հռչակավոր բժիշկը դասախոսության է, և թե չի կարելի նրան խանգարել: Կինը անձկությամբ սպասեց, բայց իզուր: Ադոլֆ Լորենցը, ուրիշ դռնով դուրս գալով, շոգեկառք էր նստել և հեռավոր քաղաք մեկնել:

Հիսուս Քրիստոսը՝ աշխարհի Փրկիչը և հոգիների մեծ Բժիշկը, թակում է շատերի սրտի դուռը: Նա ուզում է բուժել նրանց հիվանդ հոգիները և մեղսալից սրտերը: Սակայն նրանք մերժում են ընդունել այն միակ Անձին, ով կարող է իրենց ազատել մեղքի ու մոլության շղթաներից: Առաքյալն ասում է. «Մենք ինչպե՞ս պիտի ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի մեծ փրկության հանդեպ, որ նախ հռչակվեց Տիրոջ կողմից և ապա մեր մեջ հաստատվեց նրանց միջոցով, որ Իրենից էին լսել» (Եբր. 2:3):

Քաղված՝ «Զմայելի դրվագներ» գրքից

Տերունական աղոթքը

«Տերունական աղոթք»-ը Տերը երբևէ չի աղոթել: Նա ներում խընդրելու կարիք չուներ, քանի որ մեղք չուներ: Եթե սա Տիրոջ աղոթքը չէ, ապա ո՞ւմ աղոթքն է: Այս հարցին պատասխանելու համար եկե՛ք ուրիշ հարց առաջ քաշենք. «Ո՞վ կարող է աղոթել այս աղոթքը»:

Այն սկսվում է «Ո՞վ Հայր մեր, որ երկնքում ես...» խոսքերով: Այն անձը, ով անկեղծությամբ և հասկանալով աղոթում է այս խոսքերը, պետք է իմանա, որ պատկանում է մարդկանց այն խմբին, ովքեր Մուրբ Հոգուց են ծնվել Աստծո ընտանիքում: Հաջորդող խոսքերից հասկանում ենք, որ այս մարդկանց սրտերում Աստծո հանդեպ անսովոր փափագ կա:

«Քո անունը սուրբ լինի»: Երկյուղ, ակնածանք, պատիվ, սեր. այս բառերը բնութագրում են այն մարդկանց զգացումները, ովքեր Աստծուն ընդունել են որպես Հոր: Նրանք այս մեծ արտոնությանը թեթևությամբ չեն վերաբերվում:

«Քո թագավորությունը գա»: Ե՛կ ու վե՛րջ տուր մեղքին և մարդու իշխանությանը:

«Քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա»: Բոլորիս համար ավելի լավ բան չկա, քան Աստծո կամքի կատարումը:

Նրա իմաստությունը մեր լավագույն և միակ ապահով ուղեցույցն է:

Ո՞վ կարող է այսպես աղոթել: Նա, ով իր կյանքը հանձնել է Տեր Հիսուսին և ով որոշել է Նրան հետևել իր կյանքի բոլոր օրերում՝ անկախ այն բանից, թե տարիները ինչ կրեին: Շատերը փափագում են այսպիսի կյանքով ապրել, բայց ասում են, թե իրենք բավարար գործություն չունեն կամ այդքան խելացի ու բարի չեն: Երբ այսպիսի արտահայտություններ ենք լսում, ժպտում ենք ու պատասխանում՝ ասելով. «Լսե՛ք այս մարդու աղոթքի շարունակությունը»:

«Մեր ամենօրյա հացը տո՛ւր մեզ այսօր»: Տեր Հիսուսի աշակերտներն ամեն օր Իր հոգատարության կարիքն ունեն: Նրանք իրենց բոլոր կարիքների համար սովորում են Նրան վստահել ամեն օր: Հաջորդ օրը նույնն են անում:

«Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ ներում ենք մեր պարտապաններին»: Ո՞վ կարող է առանց սայթաքելու ապրել: Մենք Աստծուն պարտական ենք մեր ամբողջ սրտով և հնազանդությամբ, բայց հաճախ Նրան չենք տալիս այն, ինչ պարտավոր ենք: Մենք օրեցօր փնտրում ենք Նրա ներումը, որը ձրիապես և առատապես տալիս է: Մենք նույն ներումը հայտնում ենք մեր շուրջը գտնվողներին:

«Եվ մեզ փորձության մի տանի՛ր, հապա չարից մեզ ազատիր»: Ես պետք է հետևեմ Քեզ, ուր էլ տանես, Տեր, բայց ես ուժ չունեմ, վախենում եմ իմ տկարությունից, երբ հանդիպեմ այս կյանքի փորձություններին: Ես վստահում եմ Քեզ, Հայր, որ կազատես ինձ ինչպես շրջապատող չարից, այնպես էլ ներսս գտնվող չարից»:

Ուրեմն ո՞վ կարող է աղոթել այս աղոթքը. Տեր Հիսուսի աշակերտները: Նրանք ուժեղ, խելացի կամ բարի չեն, բայց նրանք Փրկիչ ունեն, ով Իր մահով հաշտեցրեց իրենց Աստծո հետ, և նրանք կառչած են Իրենից:

Հետևաբար եկե՛ք այս աղոթքի խոսքերը առանց հասկանալու չարտասանենք, այլ աղոթենք որպես ճշմարիտ աշակերտներ՝ աճելով շնորհքի և մեր Տեր Հիսուսի գիտության մեջ:

Նեյլ Բուրման

Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք

Հայաստանում ծառայելու մեր գլխավոր նպատակը աղքատներին և կարիքավորներին Ավետարանը հասցնելն է: Տեր Հիսուսն ասել է. «Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք» (Մատթ. 26:11):

Ամենադժվար պարագաներից մեկն այն է, որ երբ հրատապ կարիք է լինում, սակայն բավարար միջոցներ չեն գտնվում այդ կարիքները հոգալու համար: Ծանր է հիվանդին, սովածին ու ձմեռվա վառելիք չունեցողին ասել՝ ոչ: Սա մի բան է, որի հետ երկար պայքարել են, մինչև որ Տերը սովորեցրեց ինձ, որ ես Աստված չեմ:

Կարիքավորներից շատ բան ունենք սովորելու: Նրանք ապրում են՝ չիմանալով, թե իրենց սնունդը որտեղից են հայթայթելու: Նրանք սովորում են իրենց բոլոր կարիքների համար վստահել Աստծուն:

Բազմաբնակարան շենքի 3-րդ հարկում Մարիան ապրում էր իր որդու հետ, ով հոգեկան խանգարում ուներ: Մարիան երկու ոտքերից անդամալույծ էր: Նրա մահճակալը ներքնակ չուներ. քնում էր մետաղե զսպանակների վրա: Նա գրեթե մերկ էր, քանի որ այդ կերպ կարողանում էր իր կարիքները հոգալ՝ մահճակալի տակ գտնվող դույլի միջոցով: Հետևաբար շենք մտնելն անտանելի էր, իսկ հարևանները միշտ բողբոջում էին:

Նա լսել էր, որ ես նույնպես առողջության հետ խնդիրներ ունեմ: Մի օր, երբ նրան այցելեցի, ինձ տեսնելուն պես անմիջապես ասաց. «Ես աղոթում էի քեզ համար»: Այս խոսքերը հասան մինչև սրտիս խորքերը. ես երբեք չեմ մոռանա նրա դեմքի արտահայտությունը:

Այնքան քաջալերական էր տեսնել Տիրոջ հանդեպ նրա ունեցած հույսն ու հավատքը: Այդ խոսքը լսելուն պես առաջին բանը, որ մըտքովս անցավ, սա էր. «Ինչպե՞ս կարող էր նա մտածել իմ մասին և աղոթել ինձ համար, երբ ինքը այդպիսի դժվարություններով էր անցնում»:

Այո՛, աղքատները ամեն ժամանակ մեզ հետ են, և մենք պետք է հոգ տանենք նրանց մասին ու մխիթարենք նրանց նեղության ժամանակ: